

W. J. P. 1911

W. J. P. 1911

W. J. P. 1911

W. J. P. 1911

W. J. P. 1911





Ն. ԶԱՐՅԱՆ



891.93.93
2-319

ՊԱՅՄԱՆԻ ԸՆԹԵՐՅՈՂԻ ԴՐԱԴԱՐԱՆ

Ն. ՋԱՐՅԱՆ

ԱՅՈՒԳԱՄԵ Է 1961 թ.

ԱՐՁԱԿ ԵՎ ՀԱՊՈՒՀ

(ըստ Փավստոսի)

4339
I
A 5381



Հ Ա Յ Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1941

Н. ЗАРЯН
АРШАК И ШАПУ
(по Павстосу)
(на армянском языке)

А р м г и з

Е р е в а н

1 9 4 1

ՆԱԻՐԻ ԶԱՐԾԱՆ

Նաիրի Զարյանի անունը ծանոթ է ընթերցողներին ամենալայն շրջաններին, Նա Սովետական Միության աչքի ընկնող պոետներից մեկն է:

Մոտ քսան տարի Ն. Զարյանն աշխատում է սովետական հայ գրականության ասպարիզում: Նա ծնվել է 1900 թ. Վանի խռոակոնիս գյուղում, որ ըստ ավանդության ծննդավայրն է միջնադարյան հռչակավոր բանաստեղծ Նահապետ Բուշակի:

Իմպերիալիստական առաջին պատերազմի ժամանակ, 1915 թվին, բռնելով իր ծննդավայրը, Նաիրի Զարյանը եկավ Անդրկովկաս, որտեղ և ավարտեց իր կրթությունը:

Ն. Զարյանը գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, պոեմներ, արձակ երկեր, որոնց մեջ պատկերել է սոցիալիստական շինարարությունը և ուսուցիչն պայքարը հանուն սոցիալիզմի ֆաղաֆացիական պատերազմի տարիներին:

Նաիրի Զարյանի ծավալուն պոեմների մեջ աչքի են ընկնում «Ռուշանի ֆարափը» (1930 թ.) և «Դյուցազնագիրքը» (1940 թ.) որոնք սովետական հայ պոեզիայի խոշոր նվաճումներն են:

Առաջին պոեմում բանաստեղծը տաղանդավոր կերպով տալիս է գյուղի սոցիալիստական վերակառուցման—կոլեկտիվացման համար մղված պայքարի

վառ պատկերը, իսկ երկրորդ մեծ պոեմը՝ «Դյուցազնագիրքը» նվիրված է ցարիցիսյան Հայոսեային, որի մեջ բանաստեղծը Հայկական շնչով պատկերում է ֆադա-
ֆացիական պատերազմի այդ նշանավոր հերոսամարտը
մեծ Ստալինի ղեկավարությամբ:

Ն. Զարյանի «Ստալին» բանաստեղծությունը մեծ
ժողովրդականություն է վայելում, և արտասանվում
է թե հասարակական և թե դպրոցական հանդեսների
ու համերգների ժամանակ:

Պոետը կարողացել է այդ սեղմ բանաստեղծու-
թյան մեջ Հայկական ուժով խտացնել պատկերները,
ընդգծելով նրա հիմնական իդեան—Լենինի—Ստալինի
դերը հայ ժողովրդի ազատագրման գործում:

Ն. Զարյանը բանաստեղծ-տրիբուն է: Նրա պոե-
զիան հագեցած է ֆադաֆական և սոցիալական բովան-
դակությամբ: Սակայն այդ ներքին կուռ բովանդակու-
թյան հետ Ն. Զարյանը ունի և իր ինֆնուրույն բանաս-
տեղծական ձևը: Նա կարողանում է իր ընտրած նյութը
մշակել ինֆնուտիպ կերպով, գեղարվեստական այնպի-
սի պատկերների միջոցով, որոնք ընթերցողի մեջ առա-
ջացնում են համապատասխան վերաբերմունք և տրա-
մադրություն—խանդավառություն և հիացմունք, պայ-
ֆարի վնռականություն և հայրենասիրություն, ատե-
լություն և նողկանք դեպի թշնամիները:

Ն. Զարյանի պոետական վարպետության ցայ-
տուն նմուշներից մեկն է «Արշակ և Շապուհ»-ը, Հայի-
կական մի հատված հայ ժողովրդի պատմության
անցյալ էջերից, որ բանաստեղծը գրել է ըստ հայ մեծ
պատմիչ և հանձնարեղ գրող Փավստոսի:

Ոմանք կարծում են, թե Ն. Զարյանը տվել է
միայն այդ հատվածի բառացի քարգմանությունը: Այդ

Ֆիշտ չէ ի հարկէ։ Բանաստեղծը բավական ազատ կերպով չափածա աշխարհաբարի է վերածել Փավստոսի պատմած այդ դրվագը հայոց Արշակ Թագավորի և պարսից Շապուհ արքայի մասին։ Ն. Զարյանի փոխադրությունը բառացի չէ, նա բառ առ բառ չի նետել Փավստոսին և նույնիսկ տեղ-տեղ ավելացրել է առանձին մոտիվներ և մանրամասնություններ, պահպանելով դրվագի էիմնական սյուժետը։

Այդպիսի աշխատանք կատարելու համար հարկավոր է լավ գիտենալ հայոց լեզուն, ծանոթ լինել նրա նրբություններին, որպեսզի հնարավոր լինի տալ Փավստոսի գրաբար սեփական լեզվով համարժեք աշխարհաբար փոխադրություն, հասկանալի ընթերցողների ամենալայն շրջանների համար։ Եվ պետք է ասել, որ Ն. Զարյանին այդ հաջողվել է։ Նա գիտե հայերեն լեզվի ուժն ու զեղեցկությունը, լավ ծանոթ է ռեալիստական մանրամասնություններին։ Ուստի և բանաստեղծը կարողացել է պահպանել դարաշրջանի կոյուրիտը և ռեալիստական էությունը։

Կարդալով էպիկական այս հատվածը, դուք կարողանում եք պատկերացնել հեռավոր անցյալում՝ չորրորդ դարում կատարված այդ իրադարձությունը։ Ձեր առաջ կենդանի կերպով կանգնում են Արշակի, Վասակի և Շապուհի պատկերները։ Դուք տեսնում եք քեթիկներին հայրենասեր Վասակ Մամիկոնյանը պատրաստ է իրան գոհելու սեփական երկրի ազատության և փառքի համար, ինչպես խրոխտ է նա և անվեհեր գոռոզ Շապուհի դիմաց և ինչպես արհամարհում է նրան, չվախենալով նրա մահացու սպառնալիքներից։

Պետքի էիմնական իդեալ—դա հայրենասիրությունն է։ Այն միտքը, քեթիկներին հողի վրա միայն

մարդ կարող է իրեն զգալ ուժեղ, այստեղ չպետք է հասկանալ լոկ բառացի իմաստով: Այդ նշանակում է, քե երբ մարդ մեմակ է, կտրված է իր հայրենիքից, գորքից և բանակից, նա անգոր է քշնամիների դեմ: Արշակ Թագավորը մեմակ էր Շապուհի պալատում, նա չունեի հենարան, որպեսզի կարողանար դիմագրավել դաժան բռնակալին:

Բանաստեղծը հասել է իր նպատակին: Ընթերցողը կարդալով այդ պոեմը, լցվում է ազգային հպարտությամբ և հայրենասիրությամբ ջերմ զգացումով: Նա համակվում է ամսահման ատելությամբ դեպի հայրենիքի քշնամիները և դավաճանները, դեպի նենգ ու բռնակալ Շապուհները: Այսպիսով տեա Ն. Զարյանը վերցնելով պատմական մի սյուժետ հայ ժողովրդի հերոսական անցյալից, կարողացել է մեր օրերի գրական լեզվով մշակել այն իսկական բանաստեղծական ավյունով և գաղափարական նոր հագեցվածությամբ, որ վառ կերպով արտահայտված է պոեմի եզրափակիչ տողերում:

Վ. ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ



Եվ հավաքեց պարսից Շապուհ արքան
Գուշակներին և աստեղագետներին,
Այսպես խոսեց.

«Եվ ես բազում անգամ
Հայոց գոռոզ Արշակ թագավորին
Սիրել եմ կամեցել սիրով խօրին,
Եվ անարգել է ինձ նա չարակամ:
Նա ինձ երգվեց խաղաղության ուխտով,
Քըրխատոնեական իր հավատով,
Բայց նա սըտեց: Եվ ես տվի նըրան
Ամեն բարիք և ամենայն խոստում,
Ինչպես մի հայր իր կատարյալ որդուն,—
Նա չարությամբ տվեց ինձ պատասխան,
Այս երեսուն տարի ես նրա հետ
Կռվում եմ քաջ արյաց իմ բանակով,
Կոտրում եմ բյուրավոր նիզակ ու նետ,
Բայց չեմ դարձել երբեք հաղթանակով:
Նա իր ոտով է, արդ, ինձ մոտ եկել,
Եվ եթե ես հավատայի մեկ էլ,
Թե իր ուխտին հավատարիմ է նա,
Եվ հնազանդ է ինձ,—պատվով, փառքով,

Մեծարանքով, արքայական կառքով
կարձակելի, որ տուն վերադառնա»:
Եվ գուշակներն, ի ծունըր, խոսեցին,
«Թող հավիտյան ապրի արքայ արքան,
Մեզ թող այսօր, մենք վաղ այգարացին
Քեզ կրեւենք խորհուրդ մի բանական»:

Եվ այդ եղալ: Եկան մոգերը մեծ՝
Աչքերն անդունդ և լեզուները՝ օձ,
Եվ ծեր մոգպետը Շապուհին դիմեց:
«Այսօր, երբ վիս Արշակ արքան հայոց
Քո դուռն է ժամանել հոժար կամքով,
Արևիդ հետ ինչպէս է բարբառում,
Արդ՝ ի՞նչ ձայնով, կամ ի՞նչ եղանակով
Իր անձն ինչպէս է քո դիմաց վարում»:
Պատասխանեց, ասաց.

«Նա ինքնիւրեն,

Պահում է իմ դիմաց իբրև ծառա,
Պատրաստ է նա այսօր ըստըրկութեն
Փոշի դառնալ ճանապարհիս վերա»:
Այնժամ դուռթերն այսպէս որոշեցին.
«Լըսիր, արքա, խորհուրդը մեր արդար.
Այստեղ պահիր, առժամ, այդ գողողին,
Ու պատվիրակ հըղիր հայոց աշխարհ,
Որ հող բերեն և մի կոհոցըր ջուր,
Ապա արքայական հըրամանդ տուր,
Որ այդ հողով, ջրով Հայաստանի
Զանգեն կիսեց հատակն այս խորանի:
Ապա դու բռնելով ձեռքից նորա,
Ճեմիր նախ ի վերա պարսից հողին,
Ի վերա քո հողին փորձաքննիր,
Ապա բռնած կրկին ձեռքից նորա

Ճեմիր դու ի վերա հայոց հողին,
Ի վերա յուր հողին փորձաքննիր,
Եվ կիմանաս՝ խարդախ է; նմեզ, նանիր,
Թե քո ուխտին հավատարիմ է նա:
Այնժամ յուր տունը թող վերադառնա:
Իսկ եթե նա ի վերա հայ հողին
Խոսեց քեզ հետ գոռոզ և զայրագին,
Այնժամ, արքայդ հըզոր, դու իմացիր,
Երբ հասանի նա յուր հայոց երկիր,
Հենց նույն ձայնով կտա քեզ պատասխան
Եվ նույն պատերազմով երկրակործան,
Եվ կհուզի քո դեմ վրբեժ ու ոխ
Յուր գորքերով խուժդուժ ու մեծամրոխ»:
Երբ այս լըսեց պարսից Շապուհ արքան,
Հապճեպ դեպան հըզեց ի Հայաստան:
Եվ ուղտերի քարավանով եկան,
Տարան և հող, և մի կոհոցը ջուր,
Տարան մինչև պարսից արքունի դուռ,
Ու զանգեցին հատակը խորանի
Հայոց հողով, ջրով Հայաստանի:

Պալատ մտավ Արշակ արքան հայոց,
Վըսեմ կաղնեբազուկ, միրուքը հոժ:
Նըշան տըվավ Շապուհն ու հեռացան
Ատենդագետ, գուշակ, պալատական:
Ապա նա Արշակի ձեռքից բռնած՝
Ճեմում էր ի վերա պարսից հողին,
Եվ ըսքողած իր ոխակալ հոգին՝
Խոսում էր նա, իբրև թե սրտաբաց.
«Ինչո՞ւ, Արշակ, արքայդ Հայաստանի,
Ինձ հակառակ ես դու և թըշնամի:
Ես քեզ սիրել եմ հար որպես որդու,

Պատրաստ եմ քույրըս տալ քեզ կնության,
Եվ քեզ հավետ եղբայրանալ: Իսկ դու՝
Շփերթ քո ցանկությամբ ամբարտավան,
Ոչ իմ մեղքով, իմ դեմ թշնամացար,
Եվ երեսուն տարի անմըտաբար
Դու մարտնչում ես իմ գահին ընդդեմ»:
Խոսեց այնժամ Արշակը.

«Ես գիտեմ,

Որ հանցագործ եմ քո առաջ, արքա:
Ես քո սիրուն արյունն ծովեր անցա,
Ես ջարդեցի քո թըշնամիներին,
Կոտորեցի և հաղթեցի նըրանց,
Եվ ըսպասում էի քո պարզեին:
Բայց իմ թըշնամիները չար-նախանձ
Մըթագնեցին իմ հորիզոնն անամպ,
Ինձ ոխ ներշնչեցին քո նըկատմամբ,
Եվ ես փախա արդար քո հովանուց:
Սակայն երգվել էի ես քեզ վաղուց.
Այդ սուրբ երգումն իմ սիրտը նորոգեց,
Եվ ես ահա կանգնած եմ քո առաջ,
Քո ձեռքի մեջ եմ ես իբրև ծառադ,
Դատիր ինձ քո հողով արդար ու մեծ,
Ինձ ըսպանի՛ր, բընաջնջի՛ր ինձ արդ,
Զի հանցավոր եմ ես ու մահապարտ»:
Բայց վերջստին խարդախ Շապուհ արքան
Բռնեց նըրա ձեռքից և սըրտագին
Ներումներով մըխիթարեց նըրան,
Տարավ ճեմեց ի վերա հայ հողին:
Հենց ոտքը հայրենի հողին կոխեց,
Արշակն իր ոճն աղերսական՝ փոխեց:
Ինքնավայել և հույժ ըմբոստացած՝

Նա Շապուհին այսպես դիմեց, ասաց.
«Ինձնից հեռու, ծառայդ եղեոնագործ,
Որ տիրացել ես արդ. քո տերերին:
Ես չեմ թողնի ոչ քեզ, ոչ քո որդոց
Իմ պանծալի նախնյաց վրեժը հին:
Պարթև արքա Արտևանի մահին
Դու քո մահվամբ լոկ՝ հատուցում կըտաս,
Եվ երբ կըգա իմ հերթն էլ վերահաս,
Ես չեմ թողնի, որ դու, անարգ աղվես,
Ագնիվ քո տերերի բարձին բազմես»:

Եվ այդ երեկոյան Շապուհ արքան
Փարթամ ընթրիք տրվեց իր պալատում:
Վառվում էին ջահերը ոռշնական,
Առաստաղից վարդեր էին կաթում:
Սեղանապետ, երգիչ ու մատուլակ
Ու կաքավող կույսեր պատրաստ էին:
Հընչեց շեփորը գոռ ու նյարդային
Եվ երեկոն բացվեց՝ ողբաղրվազ:
Պարսից երկրում ավանդ կար մի անեղծ.
Հայոց արքան շահնշահին ընդմերձ
Պիտի բազմեր խրախճանքի պահին,
Եղբայրաբար թիկներ նրա գահին:
Սակայն ուրիշ էր կարգն այս երեկո.
Ահա ելավ, բազմեց Շապուհ արքան,
Պարթև, գանգրամորուս և ըրբածո,
Թագի վըրա պատկերն արեգական:
Ապա բարձի կարգով բազմեցըրին
Ֆազում վասալ այն թագավորներին,
Որ անդ կային իբրև պատանդ կամ հյուր,
Ապա մարզպաններին ծանրազանգուր
Ու նախարարներին պալատական:

Յասմամբ արեկոծվեց Արշակ արքան.
 Զի ամենքից հետո, ամենքից վար,
 Գահից հեռու, նորան բաղմեցըրին
 Գեանի վերա, ի վերա հայ հողին,
 Իբրև թե նա գերի էր մի թըշվառ:
 Բայց նա ելավ կանգնեց պատվանդանին
 Ու մատը կարկառած ոսկյա գահին՝
 Նա Շապուհին գլխեց որոտածայն.
 «Իմ տեղն է այդ, ուր դու ես արդ բաղմած:
 Վե՛ր կաց, իջի՛ր, որ գրավեմ ես այն,
 Իսկ դու, անարդ, չոքի՛ր գահիս գլխաց,
 Զի ես եմ պայազատն Արշակունյաց,
 Զի տեղն այդ իմ տոհմին է պատկանում,
 Իսկ դու, ծառայդ անաղդ և անանուն,
 Դու կըստանաս քո հատուցումն արդար,
 Երբ ես դարձյալ դառնամ հայոց աշխարհ»
 Խոցված էր խորախոր Շապուհ արքան
 Ու մոլեգին ցասմամբ դողում էր նա.
 «Ո՛չ,—որոտաց,—ոսո՛խ իմ չարակամ,
 Հայոց աշխարհ դու չես վերադառնա»:
 Ապա հրաման տրվեց անհղ մատով,
 Շըղթա բերին, շըղթան օղակեցին
 Հայոց թագավորի պալատոցին,
 Եվ կապեցին ձեռքերը երկաթով,
 Եվ կապեցին ոտքերը երկաթով,
 Եվ արքենի զարդերը կապեցին:
 Ապա ֆշշաց Շապուհը.

«Այս օձին

— Աքսորեցե՛ք ընդմիշտ Անուշ ամրոց,
 Թող անդ կենա անհուշ ու վշտակոծ,
 Եվ երազում տեսնի աշխարհն հայոց:

Այնժամ ոտքի ելավ Վասակն արի,
Ըսպարապետը քաջ մեր աշխարհի,
Այսպէս խոսեց.

«Ամօթ է քեզ, Շապուհ,
Այդ ո՞ւմն ես դու շղթաներով կապում,
Թագավորին, որ հյուերն է քո ազնիւի,
Որին բերել ես դու ոստանը քո
Ոչ թե ուժով, ոչ թե պատերազմի
Դաշտում տարած ըստույզ հաղթանակով,
Այլ հաշտութեան արքայական երդմամբ:
Եվ դու այսօր ներան շղթայակապ
Կտրում ես բիրտ, և արքայութեան Անճուշ,
Կտրող էր մի արքայազուն արքա
Լինել այսքան անհյուերնեկալ և ուխտադրուժ»:
Ոռնաց Շապուհն՝ աչքում արյուն ու մեղք
«Հերի՛ք է հոխորտա, շղթայեցեք»:
Ու հերոսին շղթայակապ արած,
Կանգնեցըրին բռնակալի առաջ:
Ներքև նայեց Շապուհը ժանտագին,
Զի կարճ էր հասակով Վասակն արի:
Բայց գոռ կեցվածքը հայ զորավարի
Խստիւ խոցեց ներա դաժան հոգին:
Եվ նա խոսեց՝ ատելութեամբ լեզուն.
«Այդ դ՞ու ես, նենգ Վասակ Մամիկոնյան,
Շարժում իմ դեմ քո թունավոր լեզուն:
Այդ դ՞ու էիր, որ ազվեսի նրման
Մեզ խանգարում էիր այսքան տարի
Եվ կոտորում զորքերն իմ աշխարհի:
Արդ ի՞նչ ունիս տալու ինձ պատասխան,
Որ ողորքես հոգիս ու չքմեղես,

Մեռիւր աղվեսաբար, դու նենդ աղվես»:
 Վասակը պատասխան տըվեց այսպէս.
 «Կանգնած եմ քո դիմաց, հասակըս կարճ,
 Չունեմ ձեռքիս ոչ սուր, և ոչ կապարճ,
 Եվ չեմ տեսնում դու չափն իմ մեծության:
 Երեկ առյուծ էի, այսօր — աղվես:
 Բայց ես Վասակն էի Մամիկոնյան,
 Որպէս հըսկա, հաղթահասակ ու վես,
 Կանգնած էի՝ մի ոտքըս մեկ լեռան,
 Մի ոտքըս՝ մյուս լեռան:
 Եվ երբ ես աջ ոտքիս էի հենվում,
 Աջ լեռն էի տանում գետինն ի վայր:
 Եվ երբ ես ձախ ոտքիս էի հենվում,
 Ձախ լեռն էի տանում գետինն ի վայր»:
 Եվ հարց տըվեց կըծու Շապուհ արքան,
 «Մեկնի՛ր ինձ միտքըդ, առէր ինձ պատասխան,
 Որո՞նք էին լեռներըն այն թըշվառ,
 Որ դու տանում էիր գետինն ի վայր»:
 Եվ քաջ Վասակն այսպէս մեկնաբանեց.
 «Լեռներից մեկը դու էիր, Շապուհ,
 Երկրորդը՝ Բյուզանդիո արքան էր մեծ,
 Իմ ուժը ես ձեզ հետ էի չափում:
 Երբ սուր կար իմ ձեռքին, գլխիս էլ՝ խելք,
 Հաճախ եմ քեզ ավել խոհեմ խըրատ:
 Քանի որ բաց աչքով քո դուռն եկել
 — Ու բաց աչքով ընկել ենք խորխորատ,—
 Արն, ինչ որ կամիս Գիտցի՛ր, սակայն,
 Որ իմ ազգի որդիք հերոսական
 Քեզ չե՛ն թողնի վըրեթն իրենց նախնայ:
 Եվ իղձը քո դժխեմ, հայահալած,
 Դու չեմ տանի, Շապուհ, մինչև կատար:

Զի մենք անցել ենք վեհ մի ճանապարհ՝
 Հայկական պայծառ աղեղի հետ ելած,
 Դու չես տիրի մեր աշխարհին ըմբոստ,
 Դու չես ճգմի հոգին մեր հայկազուն
 Եվ չի լռի հայրենախոս լեզուն:
 Նա կըհնչի կրկին որոտընդոստ,
 Կրորթոքի սլտերն ի ոխ, ի քեն,
 Կելնեն գընդերը մեր կապած ասպար՝
 Քեզ բաց մարտում կջախջախեն խապառ,
 Եվ ձեր կուռքերը կեղծ՝ կխորտակեն:
 Հայ հողը, ով Շապուհ, դեռ կհիշի
 Անունդ անբարիշտ, գործերդ չար,
 Դու կմեռնես, դու կգառնաս փոշի,
 Բայց նա կապրի դարձյալ և դարեդար:

Ոռնաց Շապուհն՝ աչքում արյուն ու ոխ՝
 Ու լուտանքի մի խաժամուժ ամբողջ
 Թափեց խիզախ զորավարի գլխին,
 Բայց ոչ կարեց ընկճել ներա հոգին:
 Այնժամ հըրամայեց՝ մորթել նըրան,
 Մաշկել, մարմնից հանել նրա կաշին,
 Մարմինն անել ագռափների բաժին
 Եվ մաշկը հարդ լըցնել: Եվ անվարան
 Կատարեցին այդ կամքը սոսկալի:
 Ու խրովիլակը հայ զորավարի
 Անարգելով Անուշ ամբողջ տարան,
 Ուր բանտարկված էր հեզ արքան հայոց:
 Տարան ու կանգնեցրին, ահա, այնտեղ
 Հայոց զորավարի պատկերը խեղ,
 Որ հար տեսնի Արշակը ողբակոծ
 Անգառնալի անկումն իր զորության
 Ու մըռնչա վշտից մինչև վախճան:

Մեռավ Անուշ բերդում արքան հայոց՝
 Մեռավ Շապուհ արքան եղեռնագործ,
 Ու խորտակվեց, անցավ ամրոցն Անուշ
 Անցավ նրանց փոշին, մնաց լոկ հուշ:
 Սակայն ապրեց հայ ժողովուրդն ըմբոստ,
 Ապրեց նրա ոգին որոտընդոստ,
 Ապրեց նրա հայրենախոս լեզուն
 Իր լեռներում, հողում արևազուն
 Եվ բորբոքեց սրտերն ի մարտ, ի լույս,
 Թնդաց խրճիթներում և հորինեց
 Իր պանծալի նախնյաց վիպերգը մեծ.
 Եվ թոթափեց հաղար շղթա ու լուծ
 Եվ հաղթական հասավ մեր օրերին,
 Կոմունիզմի բոցաբարբառ դարին:

1940 թ. Օգոստոս

Երևան



ՎՖ 7025 Պատվեր 587. Տիրամ 4000.

Ստորագրված է տպագրության 23/VII 41

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 60

Прог.

ԳԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



FL0040709

10

